

**ՀՀ Լիճքի բազմամետաղային հանքային դաշտի երկրաբանական
ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտի վերլուծություն**

ՀՀ Լիճքի բազմամետաղային հանքային դաշտի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի, տես [1], ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայտում առկա են թերություններ և բացթողումներ: Հայտը կազմվել է 2015 թվականին և քննարկման է ներկայացվել 2016 թ-ի մայիսին, «ԹԱԹՍԹՈՈԻՆ» ՍՊԸ-ի կողմից:

Շրջակա միջավայրի նկարագիրը հայտում ներկայացված է թերի (տես [1], 2-րդ բաժին): Օրինակ, հետազոտման տարածքը, ինչպես ներկայացված է հայտում (տես 2-րդ բաժնի 2.5 Ջրային ռեսուրսներ ենթաբաժինը), գտնվում է Մեղրիգետի վերին հոսանքում, որտեղ ձևավորվում են գետավազանի Գոզգոզ, Այրիգետ և Կալեր վտակները: Սակայն հայտում այդ վտակների նկարագրությունը բացակայում է, ջրերի հիդրոքիմիական կազմի մասին տվյալներ ներկայացված չեն: Բերված է միայն ՀՀ ԲՆ «Հայէկոմոնիտորինգ» ՊՈԱԿ-ի 2014 թ-ի տարեկան տեղեկանքում տրված ընդհանրական գնահատականը (2-րդ կարգ), Մեղրիգետի ջրերի որակի համար, ինչն արդեն 2 տարվա հնության է, տես [2], ուստի ներկայիս համար այնքան է կոռեկտ չէ:

Բացակայում են Մեղրիգետի՝ Տաշտունից ներքևի դիտակետի ջրերի որակի տվյալները ըստ ջրաբանական ցիկլերի, ինչը խիստ կարևոր է, քանի որ Մեղրիգետի այդ հատվածում առկա է ջրի սեզոնային դիֆիցիտ և նվազագույն էկոլոգիական թողքի շարունակական խախտում, տես բաժին 2.5-ի աղյուսակ 5: Բացի այդ ըստ ջրաբանական ցիկլերի գնահատումը նախատեսվում է նաև ներդնել 2017 թվականից, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման, տես [3]:

Ընդհանուր առմամբ հանքավայրի ազդակիր գետային էկոհամակարգերի ներկայիս հղումային վիճակի (reference conditions) համալիր գնահատականները թերի են: Բացակայում են Գոզգոզ, Այրիգետ և Կալեր վտակների, Մեղրիգետի վերին հոսանքի հատակային սուբստրատների մորֆոլոգիական, հիդրոքիմիական և հիդրոկենսաբանական հետազոտություններն ու ներկայիս հղումային վիճակի գնահատականները:

Մշտադիտարկումների ծրագրում, տես [1], հավելված 2, բացակայում են հետազոտական և ռեկուլտիվացիոն ժամանակահատվածներում նշված վտակների ու ընդհանրապես Մեղրիգետի վերին հոսանքի գետավազանի որակի դինամիկայի գնահատման վերահսկողական համալիր (հիդրոմորֆոլոգիա, հիդրոկենսաբանություն, հիդրոքիմիա) մոնիտորինգային ծրագիրները: Անմիջապես ազդակիր գոտում հիդրոքիմիական, հիդրոմորֆոլոգիական և հիդրոկենսաբանական մոնիտորինգ ընդհանրապես նախատեսված չէ:

Հայտի 2.5 բաժնի 2.6 (Հողերի բնութագիրը) ենթաբաժնում նշված է, որ բերրի հողաշերտի ֆոնային աղտոտվածությունը չափելու, ինչպես նաև բերրի հողաշերտի

հզորությունը որոշելու համար անհրաժեշտություն կա կատարել համապատասխան հետազոտություն և հողի նմուշարկում, տես [1]: Սակայն այդ աշխատանքները պետք է արված լինեին մինչև հայտը ներկայացնելը և հայտում պետք է ներկայացվեին արդեն այդ հետազոտությունների արդյունքները: Բացի այդ մշտադիտարկումների ծրագրում՝ հավելված 2-ում, պետք է ներառված լինեին հողերի որակի մշտադիտարկման մանրամասն պլանը՝ դիտակետերի քարտեզով, նմուշառման ժամանակացույցով, ցուցանիշների ու անալիզի մեթոդների ցանկերով:

Հավելված 1-ում. էջ 45, ներկայացված է Լիճքի բազմամետաղների հանքային դաշտի որոնողահոտազոտական աշխատանքների բնապահպանական կառավարման պլանը: Ըստ այդ պլանի հայտատուն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսել է հատուկ միջոցառումներ և մշտադիտարկման գործողություններ: Այդ մշտադիտարկման վերահսկողությունը դրված է, տես աղյուսակի Վերահսկող սյունակը, Բնապահպանական պետական տեսչության վրա: Սա խիստ տարօրինակ է, որովհետև Բնապահպանական պետական տեսչությունը մշտադիտարկումներով չի զվաղվում, այն ունի այլ ֆունկցիաներ...:

Մշտադիտարկումների ծրագրում նույնպես, տես [1]-ի հավելված 1, Չափում կամ վերահսկողություն իրականացնողը սյունակում „Թաթսթոուն,, ՍՊԸ-ի հետ միասին նշված է նաև Բնապահպանական պետական տեսչությունը: Անհրաժեշտ է ճշտել, ինչքանով է օրինական ՍՊԸ-ի հետ միասին Բնապահպանական պետական տեսչության կողմից իրականացվող համատեղ մոնիտորինգային գործունեությունը: Բնապահպանական պետական տեսչությունը պետական վերահսկողություն իրականացնող կառույց է, ոչ թե մշտադիտարկում իրականացնող:

ՀՀ Լիճքի բազմամետաղային հանքային դաշտի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կազմված է բազմաթիվ թերություններով և չի համապատասխանում գործող օրենսդրության պահանջներին:

15.10.2016

Սեյրան Մինասյան

1. ՀՀ Լիճքի բազմամետաղային հանքային դաշտի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, 2015.
2. ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Տարեկան տեղեկանք «Մակերևութային ջրերի և բնակավայրերի օդային ավազանի վիճակի մասին, 2014», www.armmonitoring.am
3. ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում